ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

1988-1998 ԹԹ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա.Գ. Ավագյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ. Ս. Մ. Մինասյան

պ. գ. թ., դոցենտ Է. Լ. Զոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Պետական Համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հուլիս 11-ին՝ ժամը 14:30–ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող՝ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում: Հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24/4:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հունիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. ՄԱՐԳԱՐՅԱՆ Գ. Ա.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների դինամիկայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախևառաջ ժամանակակից Ադրբեջանի ներքաղաքական կյանքի գլխավոր բնորոշիչները հասկանալու անհրաժեշտությամբ: Ատենախոսության շրջանակներում ներկայացվող նոր փաստերը և դրանց հիման վրա արված վերլուծությունները օգնում են բացահայտել մերօրյա Ադրբեջանի իշխանական համակարգում առկա բազմաթիվ խնդիրների պատճառներն ու ակունքները: Բացի այդ, ուսումնասիրությունը կարևոր է արցախյան հիմնախնդրի նկատմամբ ադրբեջանական դիրքորոշման խորքային ընկալման և մեկնաբանման, այդ երկրի ներկայիս ղեկավարության գործելակերպի հիմքերի ու դրա հնարավոր հետևանքների հետազոտության տեսանկյունից:

Նշված ժամանակահատվածում Ադրբեջանում ազգային, պետական և «էթնիկ» ինքնագիտակցության առանձնահատկությունների, ներքաղաքական պայքարի փուլերի, անկախացման գործընթացի յուրահատկությունների և, ի վերջո, ավտորիտար վարչակարգի ձևավորման պատճառների խորը և համակողմանի ուսումնասիրությունը հատկապես արդիական է մեր օրերում՝ արցախյան պատերազմի վերսկսման վտանգի առկայության և բանակցային գործընթացում առաջխաղացման բացակայության պայմաններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության **նպատակն** է համակողմանի վերլուծության ենթարկել 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի հիմնական առանձնահատկությունները, իշխանություն-ընդդիմություն պայքարի խորքային պատճառները, իշխանության և ընդդիմության ներսում առկա բազմաթիվ հակասությունները, ինչպես նաև այդ զարգացումների ու ղարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների փոխներգործությունը: Ելնելով հիմնական նպատակից՝ ատենախոսությունն առաջադրում և լուծում է հետևյալ հիմնական **խնդիրները**.

- վեր հանել այն հիմնական գործոնները, որոնք վերակառուցման տարիներին նպաստեցին ազգայնականության վերելքին և հանգեցրին ազգայնամոլական դրսևորումների,
- բացահայտել ադրբեջանական ազգայնական տեսությունների գաղափարական հիմքերն ու առանձնահատկությունները,
- ներկայացնել 1988 թ. քաղաքական ասպարեզում հայտնված, կոմունիստական վարչակարգին այլընտրանք հանդիսացող հիմնական քաղաքական ուժերի ու կուսակցությունների գաղափարախոսություններն ու գործունեությունը,

- հանգամանալից վերլուծության ենթարկել Ադրբեջանի ժողովրդական ճակատ (հետայսու՝ ԱԺՃ կամ Ժողճակատ) կուսակցության ձևավորման պայմաններն ու պատճառները,
- քննարկել ԱԺՃ կուսակցության հիմնական քաղաքական նպատակները և դրանց իրականացման գործելաոճը,
- վերլուծել Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի վարած ներքին քաղաքականության հետևանքով երկրում առաջացած իրադրությունը, դրա ազդեցությունը ղարաբաղյան ճակատում ընթացող ռազմական գործողությունների վրա և ներկայացնել նրա հրաժարականի հիմնական պատճառները,
- վեր հանել Ժողճակատի (Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ) հաղթանակի հիմքերն ու պանթուրքական գաղափարախոսության ժամանակավոր հաջողության հետևանքները,
- բացահայտել Ժողճակատի ներսում առկա խնդիրները, հակաէլչիբեյական տրամադրությունների ի հայտ գալու պատճառները, ինչպես նաև ներկայացնել ԱԺՃ վարած ներքին և արտաքին քաղաքականության հետևանքով առաջացած իրադրությունը,
- վերլուծել Ղարաբաղի հյուսիսային ճակատի հրամանատար Սուրաթ Հուսեյնովի՝ 1993 թ. հունիսի խռովության հիմքերը, ինչպես նաև Հեյդար Ալիևի և Սուրաթ Հուսեյնովի բանակցությունների դերը Էլչիբեյի հեռացման գործում,
- բացահայտել Հեյդար Ալիևի քաղաքական վերադարձի նախադրյալները,
- ներկայացնել արցախյան պատերազմի «դադարեցման» ու 1994 թ. մայիսյան հրադադարի կնքման հիմնական պատճառները,
- վերլուծել Հեյդար Ալիևի ձևավորած քաղաքական համակարգը, զինվորական ընդդիմության վերացմանն ուղղված քայլերը, քաղաքական հակառակորդներից ազատվելու գործելաոճը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսության գիտական նորույթներից է Ադրբեջանի՝ 1988-1998 թթ. քաղաքական իրադարձությունների համեմատաբար ամբողջական ու բազմակողմանի համապատկերի, ինչպես նաև հակահայկական և ագրեսիվ տրամադրությունների տարածման հետևանքների բացահայտումը:

Գիտական նորույթներից է նաև 1988-1998 թթ. Ադրբեջանում ընթացող ներքաղաքական իրադարձություններում ղարաբաղյան գործոնի նշանակության վերհանումը և դրանից բխող հետևանքների համակողմանի մեկնաբանությունը: Հիմնավորվում է այն դրույթը, որ ղարաբաղյան գործոնը, վճռորոշ դեր խաղալով Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներում, հակասությունների, անջատողականության և պառակտվածության

խորացման պատճառ է հանդիսացել ոչ միայն իշխող վարչակարգի և ընդդիմադիր ուժերի միջև, այլև մեծապես շահարկվել է ներիշխանական և ներընդդիմադիր պայքարում՝ դառնալով քաղաքական անկայունության հիմնական պատճառ: Բացահայտվում են այն գործոնները, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան նշված ժամանակաշրջանում Ադրբեջանի ներքաղաքական պառակտվածության համար.

- կոմունիստական վարչակարգի և վերակառուցման շրջանում քաղաքական ասպարեզում հայտնված այլընտրանքային ուժերի, մասնավորապես՝ Ժողճակատի հետ համագործակցության բացակայություն,
- Ժողճակատի առավել չափավոր, մտավորական թևի ներկայացուցիչների (Լեյլա Յունուսովա, Զարդուշտ Ալիզադե) դուրս մղում կուսակցությունից, ծայրահեղ ազգայնականների ակտիվացում (Աբուլֆազ Էլչիբեյ, Նեմեթ Փանահով, Էթիբար Մամեդով),
- բանակաշինության ձգձգվող և չհամակարգված գործընթաց, միասնական հրամանատարության բացակայություն և բազմաթիվ անկախ մարտական ջոկատների ինքնագլուխ գործունեություն,
- ռազմական հրամանատարության և քաղաքական ղեկավարության չհամաձայնեցված գործողություններ, որոշ ռազմական գործիչների՝ ռազմաքաղաքական որոշումների նկատմամբ անհնազանդության դրսևորումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ: Ատենախոսությունը ընդգրկում է գլխավորապես 1988-1998 թթ. Ադրբեջանում ընթացող իրադարձությունների պատմական ժամանակաշրջանը՝ մեկնակետ ընդունելով 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված հայտնի որոշումը, որը խորհրդանշեց արցախյան հիմնահարցի վերաբացումն ու պայմանավորեց քաղաքական զարգացումների հետագա ընթացքը: Ներառելով այդ որոշմանը հաջորդող՝ Ադրբեջանի ներքաղաքական կյանքում ծավալվող իրադարձությունների տասնամյակը՝ ուսումնասիրության ժամանակագրությունն հասնում է մինչև Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանի ավարտը և 1998 թ. նոյեմբերի նախագահական ընտրություններում նրա վերընտրվելը, ինչն ազդարարեց Ադրբեջանում ներքաղաքական իրավիճակի կայունացումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքը պատմական վերակառուցման մեթոդն է, կիրառվել են նաև փաստական աղբյուրների քննական վերլուծության և համադրության, ինչպես նաև պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Սույն ուսումնասիրության տարբեր հիմնախնդիրներն

արծարծվել են հայ և օտարերկրացի, այդ թվում՝ ադրբեջանցի հեղինակների աշխատություններում: Ադրբեջանական ազգայնականության ակունքների ուսումնասիրության առումով հետաքրքրական են ադրբեջանցի հեղինակներ Այդըն Բալաևի, Իրադա Բաղիրովայի և Էլդար Ազիզովի աշխատությունները: Ադրբեջանցի հեղինակները, իրենց մոտեցումներում և գնահատականներում հեռու լինելով օբյեկտիվությունից, այդուհանդերձ, երբեմն փաստերի ճնշման տակ հանգում են պատմական իրադրությանը համարժեք դրույթների: Այսպես, Բալաևի աշխատություններում[1] թեև բացակայում է 20-րդ դարասկզբի իրադարձությունների համարժեք գնահատումը, սակայն ընդգծվում է, որ հայ-թաթարական բախումները կարևոր ազդակ են եղել «ադրբեջանցիների» ազգակերտման գործընթացի համար: Բաղիրովայի աշխատությանը[2] ևս պետք է մոտենալ վերապահումներով, սակայն այն հետաքրքրական է 20-րդ դարի սկզբին՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (հետայսու՝ ԱԴՀ) ձևավորման նախօրեին գործող քաղաքական տարբեր ուժերի և դրանց գաղափարախոսությունների ուսումնասիրման տեսանկյունից: Ադրբեջանական ազգայնամոլության համատեքստում հայերի կերպարի ընկալման առումով ուշագրավ է Էլդար Ազիզովի աշխատությունը[3] նվիրված «Դիֆայի»[4] («Կովկասի համամուսուլմանական պաշտպանական կոմիտե») կոչվող գաղտնի խմբավորման պատմության, գաղափարախոսության և հակահայկական գործունեության ուսումնասիրությանը:

Ազգայնական գաղափարախոսական հայեցակարգում իսլամականությունից թյուրքականության անցման շրջանի առանձնահատկությունների ուսումնասիրման, ինչպես նաև Մամեդ Էմին Ռասուլզադեի, Ալիմարդան բեկ Թոփչիբաշևի և այլոց հայացքների մեկնաբանության տեսակետից հետաքրքրական է լեհ պատմաբան Թադեուշ Սվիտոխովսկու աշխատությունը[5], թեև նա նույնպես ընդգծված սուբյեկտիվ

---

[1] Балаев А., Азербайджанская нация: основные этапы становление на рубеже XIX-XX вв., Москва, 2012, 403 с.

Балаев А., Азербайджанское национальное движение в 1917-1918 гг., Баку, 1998, 280 с.

Балаев А., Мамед Эмин Расулзаде (1884-1955), Москва, 2009, 288 с.

Балаев А., Народный фронт Азербайджана. Историческая хроника: 1988-1991 , журнал «Страна и мир», №2, 1991, Мюнхен.

[2] Багирова И., Политические партии и организации Азербайджана в начале века: 1900-1917, Баку, 1997, 336 с.

[3] ƏzizovE., Difai, XX əsrin əvvəllərində ermənі-azərbaycanlı münaqişəsinin ilkin tarixi şərtləri və səbəbləri, Bakı-2009, 364 s.

[4]Կազմակերպության «Difai» անվանումը առաջացել է ադրբեջաներեն «müdafiə» բառից, որը թարգմանաբար նշանակում է «պաշտպանություն»:

[5] Swietochowski T., Russian-Azerbaijan 1905-1906: The Shaping of National Identity in a Muslim Community, London, 2004, p. 256.

մոտեցում է ցուցաբերում դարասկզբի իրադարձություններին՝ ներկայացնելով դրանք գերազանցապես ադրբեջանական տեսանկյունից:

Արցախյան շարժման և պատերազմի տարիներին Ադրբեջանում ծավալվող դեպքերի ուսումնասիրման տեսանկյունից կարևոր են տարբեր հետազոտողների, ինչպես նաև օտարերկրյա լրագրողների՝ տարածաշրջան կատարած այցերի հիման վրա արված վերլուծություններն ու մեկնաբանությունները: Այսպես, 1980-ականների վերջին արցախյան հիմնահարցի բարձրաձայնման, ինչպես նաև Ադրբեջանում ձևավորվող քաղաքական հոսանքների և խմբավորումների, առաջին հերթին՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատի պատմության ու գաղափարախոսության ուսումնասիրման առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թոմաս Գոլցի[6], Թոմաս դե Վաալի[7], Սվանթե Քորնելի[8], Սուհա Բոլուքբաշիի[9], Շիրին Հանթերի[10], Բրենդա Շաֆերի[11], ինչպես նաև հայ հեղինակներ Թաթուլ Հակոբյանի[12], Վիգեն Չեթերյանի[13], Նիկոլայ Հովհաննիսյանի[14], Բագրատ Ուլուբաբյանի[15] աշխատությունները: Ներառվել են նաև ադրբեջանցի հեղինակներ Զարդուշտ Ալիզադեի[16] , Էլդար Իսմայիլովի[17], Լեյլա Ալիևայի[18] ուսումնասիրությունները: Հաշվի առնելով որոշ հետազոտողների (Թ. Գոլց, Ս. Քորնել և այլոք) կողմնապահ դիրքորոշումը ղարաբաղյան խնդրի հանդեպ՝

---

[6] Goltz Th., Azerbaijan Diary: ARogue Reporter's Adventures in an Oil-Rich, War-Torn, Post Soviet Republic, M. E, Sharpe, Armonk, New York, London, England, 1999, p. 496.

[7] Thomas de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York and London, 2003, p. 337.

[8] Cornell S., Nagorno Karabakh conflict, Uppsala University, 1999, p. 162.

Cornell S., Azerbaijan since Independence, Armonk, New York, 2011, p. 485.

Cornell S., Small Nations and Great Powers: A study of ethnopolitical conflict in the Caucasus, Richmond: Curzon Press, 2001, p. 341.

[9] Bolukbasi S., Azerbaijan: A Political History, I.B. Tauris, New York, 2011, p. 282.

[10] Hunter Sh., The Transcaucasus in Transition: National Building and Conflict, Significant Issues Studies, Volume XVI, Number 7, The Center for Strategic and International Studies, Washington D.C., 1994, 223 p.

[11] Shaffer B., Borders and Brethren, Iran and the Challenge of Azerbaijan Identity, London, 2002, p. 248.

[12]Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, 584 էջ:

[13] Cheterian V., War and Peace in the Caucasus: Ethnic Conflict and the New Geopolitics, Columbia University Press, New York, p. 395.

[14]Hovhannisyan N., The Karabakh Problem: The Thorny Road to Freedom and Independence, Yerevan, 2014, p. 146.

[15]Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, 378 էջ:

[16]Ализаде З., Конец второй республики,
http://www.azeribooks.narod.ru/politika/zardusht_alizade/konets_vtoroy_respubliki.htm, 07.03.2012.

[17]Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, Москва, 2010, 424 с.

[18]Советское наследие 22 года спустя: переодоление или консолидация? Под ред. Лейли Алиевой, Баку, 2013, 252 с.

նրանց աշխատությունները օգտագործվել են վերապահումներով: Թ. Գոլցի աշխատությունը կարևորվում է այն պատճառով, որ նա իրադարձությունների ականատես է, և այդ ժամանակաշրջանում լրագրողական գործունեություն ծավալելով Ադրբեջանում, սերտ կապեր է ունեցել ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հատկանշական է նաև բրիտանացի լրագրող Թոմաս դե Վաալի աշխատությունը, որում հեղինակը հետպատերազմյան տարիներին Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում անցկացրած հետազոտության ու հարցազրույցների հիման վրա փորձում է վերականգնել պատերազմի տարիներին հակամարտող պետություններում ներքաղաքական զարգացումների ընդհանուր պատկերը:

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են 1988-1998 թթ. խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի ռուսական, ադրբեջանական և հայկական մամուլի հրապարակումները, մասնավորապես «Известия» (1988-1998 թթ.), «Красная Звезда» (1992-1994 թթ.), «Комсомольская правда» (1988-1992 թթ.), «Аргументы и факты» (1990-1994 թթ.), «Московские Новости» (1988-1991 թթ.), «Бакинский рабочий» (1987-1990 թթ.), «Правда» (1990 թ.), «Советский Карабах» (1988-1990 թթ.), «Собеседник» (1988-1992 թթ.) և «Azəq» (1991-1993 թթ.), ինչպես նաև ցարական ժամանակաշրջանում հրատարակվող «Баку» (1911 թ.) թերթերը: Պարբերական մամուլի ուսումնասիրությամբ հիմնականում ապահովվել է ատենախոսության փաստական հիմքը: Խորհրդային շրջանի պարբերական մամուլը հետազոտելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ գորբաչովյան վերակառուցման և հրապարակայնության շրջանում առաջին անգամ խորհրդային պատմության մեջ մամուլը սկսել էր արտահայտել կուսակցական ընտրանու ներսում առկա գաղափարական հակասությունները:

Ադրբեջանի անկախացումից հետո նախագահի պաշտոնը ստանձնած քաղաքական գործիչներ Այազ Մութալիբովի, Աբուլֆազ Էլչիբեյի և Հեյդար Ալիևի վարած քաղաքականության և հայացքների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ուսումնասիրվել են երեք նախագահների հարցազրույցները[19], ելույթները[20], ինչպես նաև նրանց գործունեությունը

---

[19]Ayaz Mütəllibov: «Bunu birinci dəfə sizə danışıram», http://www.azadliq.org/content/article/24926491.html, 12.03.2013.

[20] Выступление президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному телевидению и радио-3 октября 1994, http://lib.aliyev-heritage.org/ru/4547485.html, 7.01.2016.

Обращение к народу президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному радио и телевидению-15 марта 1995, http://lib.aliyev-heritage.org/ru/7029330.html, 1.15.2016.

Заявление Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на встрече государственного секретаря Соединенный Штатов Америки Колина Паэлла с Президентами Азербайджанской Республики и Республики Армения, с сопреседателями Минской группы ОБСЕ-Ки Уэст, 3 апреля 2001, http://lib.aliyevheritage.org/ru/9130794.html, 12.01.2016.

ներկայացնող փաստավավերագրական ֆիլմերը[21]: Էլչիբեյի ազգայնամոլական հայացքների ներկայացման համար ուսումնասիրվել են նրա հեղինակած աշխատությունները[22], որոնք բացառիկ աղբյուր են պանթուրքական գաղափարախոսության վերլուծության համար: Հատկանշական է նաև ադրբեջանական «ANS TV» հեռուստաընկերության՝ «Ən Yeni Tarix» («Նորագույն պատմություն») հաղորդաշարը[23], որտեղ առաջին անգամ հետադարձ հայացք է նետվում 1988-1994 թթ. ներքաղաքական զարգացումների և գործած սխալների վրա: Հաղորդաշարը գերազանցապես հյուրընկալել է ժամանակաշրջանի գործող գլխավոր անձանց, այդ թվում՝ Այազ Մութալիբովին, Աբուլֆազ Էլչիբեյին, Նեմեթ Փանահովին, Էթիբար Մամեդովին, Սուրաթ Հուսեյնովին և այլոց: Սա կարևոր սկզբնաղբյուր է Ադրբեջանի ներքին կյանքի նրբությունների լուսաբանման, ղարաբաղյան պատերազմում տեղ գտած բազմաթիվ դավաճանությունների բացահայտման, ռազմական հրամանատարության ներսում առկա հակասությունների վերհանման, ինչպես նաև հայերի հանդեպ տարվող քաղաքականության համակողմանի ընկալման և վերլուծության առումով:

Վերոնշյալ աշխատությունները որոշակիորեն նպաստում են 1988-1998 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրադարձությունների ուսումնասիրությանը: Հաշվի առնելով տարբեր հեղինակների՝ հաճախ իրարամերժ տեսակետները, ներգրավելով թեմային առնչվող տեղեկույթի նոր փաստական աղբյուրներ և դրսևորելով քննական-համադրական մոտեցում՝ սույն ատենախոսությունն ուրույն մոտեցում է ցուցաբերում տվյալ ժամանակաշրջանի ադրբեջանական ներքաղաքական իրավիճակի ուսումնասիրության հիմնախնդիրներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, աղբյուրները և դրանց հիման վրա արված եզրակացությունները օգտակար և կիրառելի են պատմաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների, ազգագրագետների, թուրքագետների, իրանագետների և ադրբեջանագետների համար: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել նաև հատուկ դասընթացների դասավանդման ժամանակ, մասնավորապես ղարաբաղյան հակամարտության և Ադրբեջանի պատմության ուսումնասիրության շրջանակներում: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ՀՀ և ԼՂՀ մի

---

[21]Հեյդար Ալիևի՝ 1993 թ. Հարցազրույցը ռուսական РТР հեռուստաալիքի «Момент истины» հաղորդման վարողին, https://www.youtube.com/watch?v=kK0wm-mQt3g, 5.01.2016:

Heydar Aliyev, Surat Huseynov, ANS, Ən Yeni Tarix, https://www.youtube.com/watch?v=vm4zj5xXI8Y, 3.01.2016.

1994 cu il Oktyabır hadisələri haqqında veriliş (Rövşən və Mahir Cavadovlar), ANS, Ən Yeni Tarix, https://www.youtube.com/watch?v=2L38Q-Fqlcs, 10.01.2016.

[22]Əbülfəz Elçibəy, Milli kimliyimizin təmelləri haqqında, Birici bölüm, s. 171.

[23]ANS TV, Ən Yeni Tarix, Buraxılışlar, http://www.anstv.ws/site/tvshows/137-an-yeni-tarix, 21.02.2015.

շարք պետական կառույցների (ԱԳՆ, ՊՆ, Նախագահի աշխատակազմ և այլն) գործունեության համապատասխան ուղղությունների տեսական հիմնավորումների և դիվանագիտական փաստարկումների մշակման տեսանկյունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի նիստում: Աշխատանքի մի շարք դրույթներ քննարկվել են հակամարտությունների պատճառների բացահայտմանն ու դրանց լուծման մեխանիզմների մշակմանը նվիրված «Քոքս գիտնականների ծրագրի» շրջանակում, որը տեղի է ունեցել շվեյցարական Քոքս քաղաքում 2015 թ. հունիսի 24-ից հուլիսի 26-ը: Հեղինակը ներկայացրել է զեկույց Ադրբեջանում ծավալվող հակահայկականության հիմքերի և հնարավոր հետևանքների վերաբերյալ: Ադրբեջանի ներքաղաքական կյանքի յուրահատկություններին առնչվող որոշ հարցեր քննարկման են դրվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Կովկասագիտության բաժնի Երիտասարդ կովկասագետների ասոցիացիայի անդրանիկ նիստի ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (յոթ ենթագլուխներով), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 147 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ատենախոսության գիտական նորույթը: Սահմանվում են հետազոտության ժամանակագրական շրջանակները, կիրառվող հիմնական մեթոդները, տեսական և կիրառական նշանակությունը: Ներկայացվում է հիմնախնդրին վերաբերող գիտական տեղեկույթի աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Ադրբեջանում ազգայնական գաղափարախոսության վերածնման ժամանակաշրջանը (1988-1990 թթ.)»,** բաղկացած է երեք ենթագլուխներից և ամփոփիչ եզրակացություններից: Այս գլխում ներկայացվում և վերլուծվում են վերակառուցման քաղաքականության գորբաչովյան նախաձեռնումից հետո Ադրբեջանում սկիզբ առած սոցիալ-քաղաքական շարժումներն ու դրանց գաղափարախոսությունները: Այն ընդգրկում է մինչև 1990 թ. հունվարի դեպքերը, որոնք խորհրդանշեցին Ադրբեջանում քաղաքական օրակարգի փոփոխությունը:

Առաջին՝ «20-րդ դարի սկզբի քաղաքական իրողությունների գաղափարախոսական ազդեցությունը 1980-ականների ադրբեջանական

ազգայնականության դրսևորումների վրա» ենթագլխում ադրբեջանական ազգայնական գաղափարախոսությունների հիմքերի վերհանման և համակողմանի ուսումնասիրության նպատակով անդրադարձ է կատարվում և զուգահեռներ են անցկացվում 20-րդ դարի սկզբին կովկասյան թաթարների շրջանում ազգային ինքնագիտակցության ձևավորման պատմության հետ: Ցույց է տրվում, որ 20-րդ դարի սկզբին սկսում են ձևավորվել կովկասյան թաթարների, ներկայիս ադրբեջանցիների ազգային ինքնության առաջին տարրերը: Նոր ձևավորվող ազգայնական գաղափարախոսությունների հիմքում դրվում է իսլամականությունը, որը հետագայում փոխարինվում է թյուրքականությամբ: Էթնիկ համախմբման կարևոր գործոն է դառնում ընդհանուր թշնամու, տվյալ դեպքում՝ հայերի դեմ պայքարելու գաղափարը: Ազգայնական գաղափարախոսության հիմքում ընկած այս առանձնահատկությունները՝ հակահայկականության ագրեսիվ դրսևորումներով, ի հայտ եկան նաև հետագայում՝ վերակառուցման տարիներին՝ ղարաբաղյան հիմնախնդրի վերաբացման, ազգային ինքնության վերելքի, ազգայնական գաղափարախոսությունների վերածնման և հակակոմունիստական ուժերի ի հայտ գալու գործընթացում:

Երկրորդ՝ «Քաղաքական առաջին խմբավորումները և նրանց գաղափարախոսությունները. արցախյան խնդրի դերը ադրբեջանական ազգայնականության վերելքի գործում» ենթագլխում վեր է հանվում վերակառուցման տարիներին վերաբացված ղարաբաղյան խնդրի հիմնարար դերակատարումը ադրբեջանական սոցիալ-քաղաքական շարժումների ակտիվացման պայմաններում: Բացահայտվում է, թե ինչպես և ինչու Ադրբեջանում բացառվեց համագործակցությունը կոմունիստական վարչակարգի և այլախոհական ուժերի միջև, ինչն էլ հանգեցրեց ծայրահեղ ազգայնական ուժերի ակտիվացմանը. դրա դրսևորումն էր 1988 թ. Սումգայիթի կոտորածը:

Երրորդ՝ ««Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության ձևավորումը» ենթագլուխը նվիրված է Ժողճակատի ձևավորման պատմության և գաղափարախոսական հիմքերի ուսումնասիրմանը: Ներկայացվում են այն հիմնական պատճառները, որոնց հետևանքով արցախյան հիմնահարցը դարձավ շահարկման առարկա Ադրբեջանի ներքին քաղաքականության մեջ: Ընդգծվում է, որ ղարաբաղյան գործոնը դարձավ յուրօրինակ զենք ընդդիմության ձեռքում՝ իշխանության դեմ մղվող պայքարում՝ բացառելով իշխանություն-ընդդիմություն հնարավոր համագործակցությունը և դժվարացնելով անկախացման հետագա գործընթացը:

Ատենախոսության **երկրորդ՝ «Ադրբեջանի ներքաղաքական զարգացումները Այազ Մութալիբովի և Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության տարիներին (1991-1993 թթ.)» գլուխը** բաղկացած է երկու ենթագլուխներից, որտեղ ներկայացվում են Բաքվի հայկական կոտորածից

հետո Ադրբեջանում ծավալված ներքաղաքական պայքարի գլխավոր առանձնահատկությունները:

Առաջին՝ ««Սև հունվարի» քաղաքական հետևանքները: Այազ Մութալիբովը անկախ Ադրբեջանի առաջին նախագահ (1990 թ. հունվար-1992 թ. փետրվար)» ենթագլխում ներկայացվում է, որ հունվարի դեպքերից հետո ադրբեջանական հասարակության ներսում նկատվում են խիստ հակառուսական տրամադրություններ, և առաջացած գաղափարական վակուումը սկսում է լցվել առավել ազգայնական տրամադրություններով: Ցույց է տրվում, որ Մութալիբովը թե՛ Կոմկուսի առաջին քարտուղարի, թե՛ Ադրբեջանի հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցնելու ժամանակ մեծ կախվածություն ուներ ԱԺՃ-ից և շատ դեպքերում չէր կարող հաշվի չնստել քաղաքական այդ ուժի հետ: Ընդգծվում է, որ նախագահ դառնալուց հետո Մութալիբովը ԱԺՃ թելադրմամբ ուժային կառույցներում իրականացրած կադրային քաղաքականության հետևանքով գրեթե ամբողջապես կորցնում է վերահսկողությունը Ղարաբաղում ընթացող զարգացումների նկատմամբ և չէր տիրապետում իրավիճակին: Այդ իսկ պատճառով ԱԺՃ-ն ղարաբաղյան դեպքերը լավագույնս օգտագործում էր Մութալիբովին ճնշելու և նրա հրաժարականին հասնելու նպատակով: Մութալիբովի հեռացումը նշանավորեց ազգայնականների և ԱԺՃ հաղթանակը՝ վկայելով Ադրբեջանում ազգայնականության, ավելի ստույգ՝ թյուրքական ինքնության գաղափարախոսական վերելքի մասին:

Երկրորդ՝ «ԱԺՃ քաղաքական հաղթանակը: Ազգայնականության վերելքը Աբուլֆազ Էլչիբեյի կառավարման շրջանում (1992 թ. հունիս-1993 թ. հունիս)» ենթագլխում ցույց է տրվում, որ 1992 թ. հունիսի նախագահական ընտրություններում հաղթանակ տարած Աբուլֆազ Էլչիբեյը, որոշակիորեն կրելով ԱԴՀ հիմնադիր Ռասուլզադեի գաղափարախոսական ազդեցությունը, ցանկանում էր վերականգնել ադրբեջանական ինքնության թյուրքականությունը: Սակայն նա անտեսում էր խորհրդային քարոզչության հսկայական ազդեցության հետևանքները ադրբեջանական հասարակության ինքնագիտակցության վրա: Նախ, Էլչիբեյի որդեգրած պանթուրքական քաղաքականությունը լուրջ մտավախություն առաջացրեց հատկապես ազգային փոքրամասնությունների շրջանում՝ իրենց էթնիկ ինքնության պահպանման տեսանկյունից: Այդ քաղաքականությունը բացասական հետևանքներ ունեցավ նաև արտաքին քաղաքականության համատեքստում՝ սրելով հարաբերությունները հարևան Իրանի և Ռուսաստանի հետ. երկու կողմերն էլ սատարում էին հակաէլչիբեյական ուժերին՝ նպաստելով նրա դիրքերի թուլացմանը: Ցույց է տրվում, որ Էլչիբեյի հեռացման գործում մեծ դերակատարում ունեցած Սուրաթ Հուսեյնովի խռովության հաջողությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ Ժողճակատի ներսում առաջացած խնդիրներով, ժողովրդական զանգվածների շրջանում

հակաէլչիբեյական ընդգծված տրամադրություններով, զինվորականության ազդեցության մեծացմամբ, ռազմական անհաջողություններով, ինչպես նաև Նեմեթ Փանահովի, Էթիբար Մամեդովի աջակցության շնորհիվ Ալիև-Հուսեյնով կապի հաստատմամբ:

Ատենախոսության **երրորդ՝ «Ադրբեջանի ներքաղաքական իրադրությունը Հեյդար Ալիևի նախագահության առաջին շրջանում (1993-1998 թթ.)» գլխում** ներկայացվում են Հեյդար Ալիևի քաղաքական վերադարձի հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծության են ենթարկվում նախագահակենտրոն համակարգի ձևավորմանն ուղղված քայլերը:

Առաջին՝ «Հեյդարի Ալիևի քաղաքական վերադարձի առանձնահատկությունները և նրա դիրքերի ամրապնդումն Ադրբեջանում (1993-1995 թթ.)» ենթագլխում ցույց է տրվում, որ Հեյդար Ալիևի վերադարձը քաղաքական ասպարեզ պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. նախ՝ դեռևս խորհրդային տարիներին Ալիևի վարած կադրային քաղաքականությամբ և դրա շնորհիվ իշխանական համակարգում հավատարիմ մարդկանց առկայությամբ, այնուհետև՝ Ժողճակատի ազգայնական վարչակարգի քաղաքականության հետևանքով երկրում ստեղծված ներքաղաքական ճգնաժամով, որոշ ակնառու Ժողճակատայինների՝ Հեյդար Ալիևին ցուցաբերած աջակցությամբ և, ի վերջո, հարևան երկրների, մասնավորապես Ռուսաստանի և Իրանի՝ Էլչիբեյին հեռացնելու շահագրգռվածությամբ: Պակաս կարևոր գործոն չէր ժողովրդական զանգվածների շրջանում Ալիևի ունեցած հեղինակությունը: Վերլուծության են ենթարկվում Հեյդար Ալիևի ձեռնարկած քայլերը՝ ուղղված քաղաքական դաշտի անկայունացման պատճառ հանդիսացող ներքին ու արտաքին հիմնախնդիրների լուծմանը:

Երկրորդ՝ «Հակաալիևյան դժգոհությունների ճնշումը և նախագահակենտրոն համակարգի ձևավորումը (1995-1998 թթ.)» ենթագլուխը վերաբերում է 1994 թ. մայիսի հրադարարի կնքմանը հաջորդող քաղաքական զարգացումներին: Ներկայացվում է, թե ինչպես Ալիևը կարողացավ ազատվել զինվորական ընդդիմությունից, ճնշել այլախոհական դրսևորումները և ամրապնդել իր և իր համար քաղաքական հենարան հանդիսացող «Յենի Ազերբայջան» կուսակցության դիրքերը: Ընդգծվում է, որ Ալիևը մի կողմից կայունություն բերեց Ադրբեջանին՝ ապահովելով քաղաքական համակարգի անսասանությունն ու հեռու պահելով երկիրը պատերազմական և ներքաղաքական ցնցումներից, սակայն, մյուս կողմից, իր անձի շուրջ կառուցված քաղաքական համակարգի ներդրմամբ, կասեցրեց ժողովրդավարության հնարավոր զարգացումը, ինչն էլ, ի վերջո, հանգեցրեց ավտորիտար հասարակարգի ձևավորմանը:

«Եզրակացություններում» ամփոփված են հետազոտության արդյունքները, որոնցից առանձնացված են հետևյալները.

1. 1980-ական երկրորդ կեսին՝ «Վերակառուցման» քաղաքականության շրջանում, ազգայնականության վերելքն Ադրբեջանում տեղի էր ունենում 20-րդ դարասկզբին կովկասյան թաթարների ազգային ինքնագիտակցության ձևավորման և ազգայնական գաղափարախոսությունների հայեցակարգային փոխակերպումների նմանությամբ և օրինակով:

2. Արցախյան հիմնախնդրի շուրջ ծավալվող զարգացումները դարձան ադրբեջանական իշխանության և ընդդիմության միջև փոխհարաբերությունների հիմնական առաջնահերթությունները, իսկ ղարաբաղյան գործոնի երկուստեք շահարկումը՝ ներքաղաքական պայքարի գլխավոր առանձնահատկությունը:

3. Ադրբեջանի Կոմունիստական կուսակցությունը և ԱԺՃ-ն, չկարողանալով համագործակցության եզրեր գտնել, ներքաշեցին երկիրը երկարատև պայքարի մեջ, ինչն էլ նոր բարդություններ առաջացրեց անկախացման ուղի բռնած Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Ազգայնամոլական տրամադրությունների վերելքի պայմաններում Ադրբեջանի հայ բնակչության նկատմամբ ագրեսիվ մեթոդների կիրառման հետևանքով ԱԺՃ-ից դուրս մղվեցին առավել չափավոր հայացքներ ունեցող գործիչները (Զարդուշտ Ալիզադե, Լեյլա Յունոսովա և այլոք), ինչը հանգեցրեց արմատական, ծայրահեղական թևի ակտիվացմանը:

4. Թեև ադրբեջանական քաղաքական ուժերի կողմից հակահայկական տրամադրությունների հրահրումը որոշակիորեն ծառայում էր որպես համախմբող գործոն հասարակության տարբեր շերտերի համար, սակայն, փաստացի, ղարաբաղյան խնդիրը ոչ միայն չդարձավ միավորող կամուրջ երկրի ընդդիմության ու իշխանության միջև՝ այլևս հանգեցրեց խորը երկպառակտվածության առաջացմանը, ինչի արդյունքում Ադրբեջանը կանգնեց քաղաքացիական պատերազմի լուրջ վտանգի առջև:

5. Տեղի իշխանությունների լռելյայն համաձայնությամբ և թողտվությամբ կազմակերպվեցին և իրականացվեցին խորհրդային հասարակարգի համար աննախադեպ՝ Սումգայիթի, Կիրովաբադի և Բաքվի հայերի բռնի տեղահանումն ու զանգվածային ջարդերը, որոնց՝ միութենական և հանրապետական իշխանությունների կողմից քաղաքական գնահատական չստանալը հետագայում դարձավ ազգային հողի վրա բռնությունների կիրառման յուրատեսակ «թույլտվություն»:

6. Եթե 20-րդ դարի սկզբին կովկասյան թաթարների շրջանում զուգորդվում էին հակահայկական և հակացարական միտումները, ապա «Սև հունվարի» դեպքերից հետո Ադրբեջանում տեղի ունեցավ հակահայկական և հակախորհրդային տրամադրությունների սերտաճում:

7. Ադրբեջանի ներքաղաքական անկայուն իրադրությունը սերտորեն փոխկապակցված էր ռազմաճակատում ադրբեջանական բանակի կորուստների ու անհաջողությունների հետ: Այդ գործընթացները պայմանավորված էին բանակաշինության դանդաղ ընթացքով, կազմակերպված, միասնական հրամանատարության բացակայությամբ, բազմաթիվ անկախ ջոկատների առկայությամբ, կենտրոնի՝ Բաքվի հետ կապի և համաձայնեցված գործողությունների բացակայությամբ, ռազմական հրամանատարության շրջանում անհնազանդության դրսևորումներով, մասնավորապես՝ գործող վարչակարգի դեմ ուղղված դավաճանական քայլերով: Հատկանշանակ է, որ 90-ականներին դավաճանության մեջ անուղղակիորեն մեղադրվող անձանցից շատերը զբաղեցնում են բարձր զինվորական պաշտոններ ժամանակակից Ադրբեջանի ԶՈՒ-ում (օրինակ՝ ներկայիս ԳԽ շտաբի պետ Նեջմեդդին Սադիգով, ՊՆ նախկին նախարար Սաֆար Աբիև և ուրիշներ):

8. Անկախ Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի հրաժարականը պայմանավորված էր մի կողմից Կոմունիստական կուսակցության կազմալուծմամբ և քաղաքական հենարանի բացակայությամբ, մյուս կողմից՝ Ժողճակատի նկատմամբ տարվող մեղմ քաղաքականությամբ, մասնավորապես բանակային հրամանատարության կազմում Ժողճակատայինների ընդգրկմամբ և դրա հետևանքով ռազմաճակատի նկատմամբ վերահսկողության կորստով:

9. Խորհրդային տարիներին ադրբեջանցիների՝ ինքնուրույն էթնիկ պատկանելության գիտակցության ձևավորմանն ուղղված նպատակային քաղաքականության հետևանքով անկախացած Ադրբեջանում Էլչիբեյի քարոզած պանթուրքական գաղափարախոսությունն այլևս չուներ բավարար հենք, և կարճ ժամանակ անց այն անհաջողություն կրեց: Միևնույն ժամանակ Էլչիբեյի որդեգրած թյուրքականության քաղաքականությունը լուրջ մտավախություն առաջացրեց հատկապես ազգային փոքրամասնությունների շրջանում՝ իրենց էթնիկ ինքնության պահպանման տեսանկյունից: Այդ քաղաքականությունը բացասական հետևանքներ ունեցավ նաև արտաքին քաղաքականության համատեքստում՝ սրելով հարաբերությունները հարևան Իրանի և Ռուսաստանի հետ:

10. Ալիևի քաղաքական վերադարձը խորհրդանշեց «ադրբեջանական» ազգային ինքնության գաղափարական հաղթանակը: «Ադրբեջանականությունը» իր մեջ ամփոփում էր իսլամականությունն ու թյուրքականությունը, սակայն գլխավոր շեշտը դրվում էր ադրբեջանցիների աղվանական ծագումնաբանական տեսության, ավելի ստույգ՝ ադրբեջանցիների բնիկության և աղվանական ժառանգության «օրինական» իրավահաջորդը լինելու հանգամանքի վրա:

11. 1994 թ. մայիսին հրադադարի կնքումը պայմանավորված էր նախևառաջ ռազմական ասպարեզում ադրբեջանական բանակի կրած շարունակական անհաջողություններով, ինչպես նաև տարածաշրջանային լարվածության խորացմամբ: Հրադադարի կնքմամբ Հեյդար Ալիևը կարողացավ չեզոքացնել ներքաղաքական ապակայունացման հիմնական պատճառ հանդիսացող ղարաբաղյան գործոնը, սակայն բացառված չէ, որ պատերազմի վերսկսման դեպքում այն կրկին կարող է ներքին իրադրության ապակայունացման և հակասությունների խորացման պատճառ դառնալ Ադրբեջանում:

12. Հեյդար Ալիևի կողմից քաղաքական ղեկավարության ստանձնումը մի կողմից կայունություն բերեց Ադրբեջանին՝ ապահովելով քաղաքական դաշտի անսասանությունն ու հեռու պահելով երկիրը պատերազմական և ներքաղաքական ցնցումներից, մյուս կողմից՝ հանգեցրեց Ալիևի անձի շուրջ կառուցված իշխանական համակարգի ներդրմանը՝ կասեցնելով ժողովրդավարության զարգացումը և ձևավորելով ավտորիտար հասարակարգ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Հայրապետյան Տ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն. Պատմական անհրաժեշտություն, թե՞ հաջողված դիվանագիտություն, ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 261-268:
2. Հայրապետյան Տ., Ադրբեջանի Ժողովրդական Ճակատ կուսակցության ձևավորումը և գործունեությունը (1988-1990 թթ.), Արևելագիտության հարցեր, հատոր VII, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2012, էջ 257-265:
3. Հայրապետյան Տ., Ադրբեջանական ծագումնաբանության հիմնական տեսությունների որոշ առանձնահատկություններ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածու, հատոր VIII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2012, էջ 212-223:
4. Հայրապետյան Տ., Ղարաբաղյան գործոնը Ադրբեջանի 1991-1994 թվականների ներքաղաքական զարգացումներում, Տարածաշրջանային խնդիրներ, հրատարակվել է ՀՀ Կառավարման Ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորմամբ, Երևան, 2013, էջ 155-175:
5. Հայրապետյան Տ., Հեյդար Ալիևի վերադարձի քաղաքական առանձնահատկությունները, Հայագիտության հարցեր, հանդես 3(6), ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2015, էջ 113-125:

ТАТЕВИК АРМЕНОВНА АЙРАПЕТЯН

«ДИНАМИКА ВНУТРИПОЛИТИЧЕСКИХ СОБЫТИЙ В АЗЕРБАЙДЖАНЕ С 1988 ПО 1998 ГОДЫ»

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история».

Защита состоится 11-го июля 2016 г., в 14:30 ч. на заседании специализиронного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

РЕЗЮМЕ

Диссертация посвящается изучению динамики внутриполитических событий в Азербайджане за период с 1988 по 1998 годы, который характеризуется не только острой борьбой между правительством и оппозицией, но и существующими серьезными противоречиями вышеупомянутых сторон. В данном процессе решающую роль имел фактор Нагорного Карабаха.

В начале 1988 года из Нагорного Карабаха поступил импульс о формировании сил альтернативных азербайджанскому коммунистическому режиму. Период, предшествующий независимости Азербайджана, был отмечен бурными событиями внутриполитической жизни и возрождением азербайджанского радикального национализма, в связи с чем были спланированы и организованы погромы армянского населения в Сумгаите, Кировабаде (Гандзаке) и Баку. После провозглашения независимости в августе 1991 года Азербайджан вступил в новый этап политического противостояния. Активная борьба велась между бывшим представителем коммунистического режима, первым президентом Азербайджана Аязом Муталибовым и лидером партии Азербайджанского народного фронта Абульфазом Эльчибеем. Отставка Муталибова и избрание Эльчибея президентом Азербайджана еще больше усугубили внутриполитический раскол страны и привели к возникновению новых разногласий. Ситуация изменилась в 1993 году с приходом к власти Гейдара Алиева. Внутриполитическая стабилизация была отмечена в 1994 году при подписании соглашения о прекращении огня в зоне нагорно-карабахского конфликта, ослаблением оппозиции, а также введением новой системы управления и формированием культа личности.

Актуальность данной работы в первую очередь заключается в необходимости понять основные черты сегодняшней внутриполитической жизни Азербайджана. Новые факты, представленные в рамках данной диссертации, помогают выявить причины и истоки многочисленных проблем, с которыми сегодня сталкивается правительство Азербайджана. Помимо этого, исследование важно в рамках изучения восприятий и интерпретаций азербайджанской позиции в карабахском вопросе.

Анализируя мнения армянских и иностранных, в том числе азербайджанских авторов, зачастую противоречащих друг другу, используя новые факты, связанные с данной темой, применяя методы сравнительного анализа и исторической

реконструкции, данная диссертация проявляет своеобразный подход к изучению внутриполитической ситуации в Азербайджане в заданный период времени.

Всестороннее и глубокое изучение национальных и этнических особенностей Азербайджана, стадий внутриполитических конфликтов, особенностей процесса независимости и, в конечном счете, причин формирования авторитарного режима, особенно актуально в связи с угрозой возобновления войны в Карабахе, отсутствием прогресса в переговорном процессе и ухудшением ситуации в регионе.

Диссертация помогает выявить основные факторы, имеющие решающую роль во внутриполитическом расколе Азербайджана в течение указанного периода:

- отсутствие сотрудничества с альтернативными силами на политической арене, в частности, между коммунистическим режимом и Народным Фронтом,
- выход из партии Народного фронта представителей умеренных сил и интеллигенции (Лейла Юнусова, Зардушт Ализаде) и активизация радикальных националистов (Абульфаз Эльчибей, Немет Панахов, Этибар Мамедов),
- несогласованный и продолжающийся процесс в сфере армейского строительства, отсутствие единого военного командования и независимой произвольной деятельности многочисленных воинских отрядов,
- несогласованные действия военного командования и политической элиты, проявления неповиновения к военнополитическим решениям среди некоторых военных деятелей.

TATEVIK A. HAYRAPETYAN

THE DYNAMICS OF AZERBAIJANI INTERNAL POLITICS FROM 1988 TO 1998

The defense of the dissertation will take place at 14:30 on the 11th of July, 2016 at the meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

This dissertation is devoted to the study of the peculiarities of the internal political developments in Azerbaijan from 1988 to 1998, which were characterized not only by the acute struggle between the government and the opposition, but also by the serious contradictions existing within the governmental and oppositional camps. The Nagorno-Karabakh factor had a crucial role in these processes.

At the beginning of 1988, the developments in Nagorno-Karabakh became the stimulus for the formation of alternative powers aspiring to replace the communist regime in Azerbaijan. The period preceding Azerbaijan's independence is marked by dramatic developments in the internal political life of the country, as well as the revival of Azerbaijani nationalism. As a result, massacres were organized and implemented in Sumgait, Kirovabad (Ganja), and Baku targeting the Armenian communities there. After gaining independence (August 31, 1991), Azerbaijan entered a new stage of political unrest. The active struggle was between Ayaz Mutalibov, the first Azerbaijani President and the former representative of the communist regime, and Abulfaz Elchibey, the Popular Front Party leader. Mutalibov's resignation and Elchibey's ascension to the presidency, even further deepened the political fragmentation in Azerbaijan, leading to the emergence of new confrontations. The situation changed in 1993 after Heydar Aliyev came to power. In 1994, the internal political stabilization was marked by the signing of a cease-fire, the weakening the opposition, as well as by the introduction of the presidential system of government and the formation of the cult of President's personality.

The relevance of the study of the dynamics of the political developments in Azerbaijan from 1988 to1998 is driven by the need to understand the main features of the domestic political life of Azerbaijan in our days. The findings presented in the dissertation help to identify the causes and origins of many problems of the current Azerbaijani government. In addition, the study is important for the in-depth comprehension and interpretation of the Azerbaijani stance on the Karabakh issue, as well as the analysis of the current leadership's practices and their possible consequences.

This thesis applies a unique approach to the problems of the domestic political situation in the period under investigation by analyzing the often divergent views of Armenian and foreign authors, including the Azerbaijani ones, incorporating new factual sources of information related to the theme, as well presenting a critical and comparative perspective.

The study of the peculiarities of national, state and ethnic identies in Azerbaijan, the stages of the domestic political struggle of the period, the characteristics of the process of getting independence, and, finally, the in-depth and comprehensive study of the causes of the formation of an authoritarian regime is especially relevant nowadays under the threat of a renewed war in Karabakh, the lack of progress in the negotiations, and the exacerbating situation in the region.

The thesis helps to identify the main factors that were crucial for the specified period of the domestic political discord in Azerbaijan:

- lack of cooperation between communist regime and the alternative forces formed on the political scene in the period of reconstruction, particularly with the Popular Front,
- oozing of the more moderate intelligentsia wing of the Popular Front (Leyla Yunus, Zardusht Alizade) out of the party and activating the extreme nationalists (Abulfaz Elchibey, Nemet Panahov, Etibar Mamedov),
- delay and discoordination in the formation of the army, lack of unified command and arbitrary activities of the numerous independent military units,
- uncoordinated actions of the military command and the political elite, some military figures' disobedience of the military and political decisions.